



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 1-Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱՆՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին»>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Լեռնանիստ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 4-ի N 40-Ն որոշմամբ հաստատված հավելվածը

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում գտնվող, իրենց կողմից սույնտրի սրահներում գործունեություն ծավալող անհատ ձեռնարկատերեր՝ Կարեն Հակոբյանին, Աննա Մկրտչյանին, Արմեն Մովսիսյանին, Անահիտ Վարդանյանին, Սոֆյանա Խաչատրյանին, Զեփյուռ Հարությունյանին, Արա Վարդանյանին, Անի Սարգսյանին և Գագիկ Ալոյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն առաջին եռամսյակի համար՝ մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՏՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 2-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ  
հոդվածի պահանջներով

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2016 թվականի  
փետրվարի 4-ի << Համայնքային ծառայության մրցութային և  
ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N 11-Ա  
որոշման մեջ կատարել փոփոխություն՝

<<Արտավազդ Բարսեղյան>> բառերը փոխարինել «Սևակ Տիգրանյան»  
բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**ԱՐՏՅՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

20 20 թ. հունվարի 11  
գ.Լեռնանիստ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 3-Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐԾՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի  
հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը  
հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի  
24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշման  
պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36 -րդ հոդվածի  
2-րդ մասի 2-րդ կետով

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Հաստատել Լեռնանիստ համայնքի խնամակալության և հոգաբարձության  
հանձնաժողովի 2021 թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը, համաձայն  
հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի  
մասնագետ՝ Սոֆյա Արրահամյանին խնամակալության և հոգաբարձության  
հանձնաժողովի տարեկան ծրագրի միջոցառումները կատարել 2021 թվականի  
տարեկան ծրագրին համապատասխան:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

**ԱՐՏԱԿ ԱՂԱՄՅԱՆ**



**ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ**  
**ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԵՎ ՀՈԳԱՔԱՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ**

1. Ներածություն

Համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի, ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման, խնամակալության և հոգաբարձության /ԽՀ/ մարմինների կանոնադրության: Ծրագիրը համահունչ է երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների պետական քաղաքականությանը և երեխայի իրավունքների պաշտպանության 2021 թվականի տարեկան պետական ծրագրին:

2. Տարեկան ծրագրի նպատակը և խնդիրները

2.1. Ծրագրի նպատակն է՝

Լեռնանիստ համայնքում բարելավել երեխաների բնականոն զարգացումը, նպաստել ազգային և համամարդկային արժեքներ կրող անձի ներդաշնակ ձևավորմանը:

2.2. Ծրագրի հիմնական խնդիրներն են՝  
ապահովել՝

- երեխաների, ինչպես նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը
- ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքը
- կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ խնդիրներ:

2.3. Ծրագրի նպատակին հասանելիության ապահովմանն ուղղված գործառույթները՝

Բացահայտել՝

1. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և այն չափահաս անձանց մասին տեղեկությունները, ովքեր ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ
2. ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքեր
3. համայնքում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացածության, համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերը
4. կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին:

Իրականացնել՝

Հանձնաժողովին լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ վերապահված գործառույթները, մասնավորապես՝

- սկզբնական հաշվառման վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին
- անցկացնել երեխայի և այն անձի /անձանց/ կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը
- այլ գործառույթներ:

3. Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2021 թվականին նախատեսվող միջոցառումները

3.1. Իրավիճակի վերլուծություն

1. թափառաշրջիկությամբ, մուրացկանությամբ զբաղվող, հակասոցիալական վարք դրսևորող երեխաների հայտնաբերման նպատակով ոստիկանության բաժնի հետ համատեղ կազմակերպել ստուգայցեր.

2. մշակութային և ուսուցողական միջոցառումների միջոցով նպաստել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, մասնավորապես սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած և հակասոցիալական վարք դրսևորող /իրավախախտում կատարած/ երեխաների աշխարհայացքի ձևավորմանը ու զարգացմանը, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակությանը, ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը:

Լեռնանիստ համայնում երեխաների իրավունքների պաշտպանության որակի բարելավման, համայնքում գործող խնամակալական հաստատությունների երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտություն կա կազմակերպել՝

1. երեխաների իրավունքների պաշտպանության թեմայով խնամակալական հաստատություններում, կազմակերպել հանդիպումներ, դասընթացներ երեխաների և նրանց ծնողների հետ
2. յուրաքանչյուր եռամսյակ կազմակերպել հանձնաժողովի ընդլայնված նիստ՝ շահագրգիռ անձանց մասնակցությամբ
3. մշակութային և ուսուցողական միջոցառումների միջոցով նպաստել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, մասնավորապես՝ սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած և հակասոցիալական վարք դրսևորող /իրավախախտում կատարած/ երեխաների աշխարհայացքի ձևավորմանը ու զարգացմանը, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակությանը, ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը:



ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

h/h	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետը	Պատասխանատու կատարողը	Ֆինանսական աղբյուրը
1	2	3	4	5	6
1.	ԽՀՀ-ի նիստերի հրավիրում. արձանագրում	Տարվա ընթացքում առնվազն 3 ամիսը մեկ անգամ կազմակերպել ԽՀՀ-ի նիստ	3 ամիսը մեկ անգամ	ԽՀ	հանձնաժողովի քարտուղար
2.	Պարտադիր կրթությունից մնացած երեխաների վերաբերյալ տվյալների հավաքագրում	Երեխաներին ապահովել դուրս պարտադիր կրթությամբ տվյալների	Տարվա ընթացքում	ԽՀ	հանձնաժողովի քարտուղար
3.	Մասնակցել երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների իրականացման հարցում ծագած կամ երեխայի դաստիարակության համար ծագած վեճերը քննող դատական նիստերին	Պաշտպանել երեխաների իրավունքները	Տարվա ընթացքում	ԽՀ	հանձնաժողովի քարտուղար
4.	Ձմեռային զորացրման և զորակոչի հանդիսավոր ընդունում և ճանապարհումը դեպի Հայոց բանակ <<Հայոց բանակի>> օրվան նվիրված միջոցառում	2020 թվականի Արցախ-ադրբեջանական պատերազմի մասնակից զինվորների զորացրումը հանդիսավոր կերպով կատարելու և ձմեռային զորակոչի ճանապարհումը դեպի հայոց բանակ, Ազգաբնակչության մեջ բարձրացնել հայրենասիրական ոգին; Հայրենասիրական ոգով դաստիարակելու մեր զավակներին, և վառ պահել զոհված ազատամարտիկների	Հունվար-փետրվար  Հունիս-ից-օգոստոս	ԽՀ	հանձնաժողովի քարտուղար

		հիշատակը			
5.	Կատարել տնայցներ՝ հայտնաբերել կյանքի դժվարին պայմաններում գտնվող ընտանիքներին, երեխաներին	խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների բացահայտում	հունվար-դեկտեմբեր	հանձնաժողովի անդամներ	Առանց ֆինանսավորման
6.	Կատարել տնայցներ՝ հայտնաբերել կորոնավիրուսի տնտեսական տևական հետևանքներ կրած սոցիալապես նապահով ընտանիքներին	խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից	2021 հունվարից - դեկտեմբեր	հանձնաժողովի անդամներ	Համայնքի բյուջե
7.	Արցախի Հանրապետությունից Լեռնանիստ համայնք տեղափոխված ընտանիքներում կատարել տնայցներ՝ հայտնաբերել կյանքի դժվարին պայմաններում գտնվող ընտանիքներին, երեխաներին	խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից Արցախի Հանրապետությունից Լեռնանիստ համայնք տեղափոխված կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների բացահայտում	հունվար-դեկտեմբեր	հանձնաժողովի անդամներ	Համայնքի բյուջե
8.	Բազմանդամ ընտանիքների վերաբերյալ տվյալների հավաքագրում	Հայտնաբերել համայնքում բազմանդամ ընտանիքներին և աջակցություն ցուցաբերել	Տարվա ընթացքում	Հանձնաժողովի անդամներ	Համայնքի բյուջեից
9.	Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում	Երեխաների սրտում բարձրացնելու մայրական անսահման սիրո և գեղեցկության չափանիշը	Մարտի - ապրիլ	ԽՀ հանձնաժողովի քարտուղար	համայնքապետարան
10.	<< Մեծ եղեռնին >> նվիրված միջոցառում	Հավերժ փառք և պատիվ Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին	ապրիլ	ԽՀ հանձնաժողովի քարտուղար	համայնքապետարան
11.	Զրույց անչափահասների հետ, հակահասարակական արարքներից զերծ պահելու համար	Մշակույթի տան փոքր դահլիճում կազմակերպել միջոցառում նշված խորագրով, երեխաներին ծանոթացնելու իրավական հարցերին և անչափահասների հետ տարվող դատարանական աշխատանքներին	մայիս	ԽՀ հանձնաժողովի քարտուղար	համայնքապետարան
	Հաղթանակի օրվան	Բարձրացնել	մայիս	ԽՀ	համայնքա

	նվիրված միջոցառում	հայրենասիրական ոգին <<Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվի>>		հանձնաժողովի քարտուղար	պետարան
13.	<<Վերջին զանգ>>	Համայնքի Ս.Նազարյանի անվան դպրոցի 12-րդ դասարանի երեխաներին բարի երթ մաղթել	մայիս	ԽՀ հանձնաժողովի քարտուղար	համայնքա պետարան
14.	2020թ. հունիսի 1-ին կազմակերպել մշակութային միջոցառում՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան	<<Լեոնանիստի մանկապարտեզ>> <ՈԱԿ-ի սաների և անապահով ընտանիքների երեխաների մասնակցությամբ	հունիսի 1	ԽՀ հանձնաժողովի քարտուղար	համայնքա պետարան
15.	Հայ երգի, պարի, երաժշտության մանկապատանեկան Մրցույթներ	Մրցանակների ձեռք բերում	Տարվա ընթացքում	ԽՀ հանձնաժողովի քարտուղար	համայնքա պետարան
16.	Հրաժեշտ մանկապարտեզին	Կազմակերպել միջոցառում մանկապարտեզի ավարտական երեխաների հետ <<Դպրոցի ճանփան >> խորագրով	օգոստոս	ԽՀ հանձնաժողովի քարտուղար	համայնքա պետարան
17.	Համայնքի Ս.Նազարյանի անվան դպրոցում կազմակերպել և անցկացնել հանդիպումներ, գրույց զեկուցումներ	Անչափահասների հանցագործությունների թվի նվազեցում	2021 թվականի ընթացքում	ԽՀ հանձնաժողովի քարտուղար	համայնքա պետարան
18.	Կատարել տնայց՝ խնամակալություն և հոգաբարձություն սահմանված, ինչպես նաև խնամակալ ընտանիքներ /կատարել տնայցեր  նաև ըստ անհրաժեշտության/	Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից կատարել տնայցեր, բացահայտելու համայնքում կրթությունից դուրս մնացած կամ չընդգրկված երեխաների մասին և հաշմանդամ երեխաների համար տնային ուսուցման կազմակերպում	յուրաքանչյու ր կիսամյակը մեկ	հանձնաժողովի անդամներ	համայնքա պետարան
19.	Ողջույն դպրոց	Հաշվի առնելով Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության հետ պայմանավորված	Սեպտեմբեր	Հանձնաժողովի անդամներ	համայնքա պետարան



		<p>ուսումնական հաստատություններում պատշաճ իրականացնել հեռավար դասընթացները Սեպտեմբերի 1, նոր ուսումնական տարվա սկիզբ, գիտելիքների, գրի և դպրության օր: Բարձրացնել գիտելիքի դերը երեխաների մոտ</p>			
20.	Հայ երգի պարի երաժշտության մանկապատանեական մրցույթներ	Մրցանակների ձեռք բերում	Հոկտեմբեր - նոյեմբեր	Հանձնաժողովի անդամներ	համայնքապետարան
21.	Կատարել համայնքում ստուգայցեր՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամների և ոստիկանության աշխատակիցների հետ	Համատեղ կազմակերպել ստուգայցեր ոստիկանության բաժնի աշխատակիցների հետ, հակասոցիալական վարք դրսևորող երեխաների հայտնաբերման նպատակով: Անչափահասների կողմից օրինապահ մարմինների հետ խնդիրներ ծագելու, երեխաների վարքային շեղումների դեպքում տեղեկացնել նաև երեխաների իրավունքների պաշտպանության բաժին	դեկտեմբեր	Հանձնաժողովի անդամներ և ոստիկանության աշխատակիցներ	համայնքապետարան
22.	Ամանորին նվիրված տոնական երեկո	Լեռնանիստ համայնքի երեխաների մասնակցություն ամանորյա տոնակատարություն		Հանձնաժողովի անդամներ	համայնքապետարան

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 4- Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 26-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2021 թվականի հունվարի 8-ի թիվ 1 հրամանը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Հաստատել Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների, աշխատակազմի աշխատողների և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների 2021 թվականի արձակուրդային գրաֆիկը ըստ հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ՝**

**ԱՐՏԱԿ ԱԴԱՄՅԱՆ**





**ԺԱՄԱՆԱԿԱՏՈՒՅՑ**  
**ԱՐՁԱԿՈՒՐ ԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ (2021ԹՎԱԿԱՆ)**

Կոտայքի մարզի Լեռնահիտ համայնքի ղեկավարի նշանակման համաձայնագրի պայմանագրի կնքման արձակուրդի մասին  
(Ստորագրումը պետք է կատարվի միայն համաձայնագրի կնքման արձակուրդի ավարտից հետո)

Գ/Բ	ԱՇԽԱՏՈՂԻ ԱՉԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԱՇԽԱՏՈՂԻ ՉԲՄՆԵՏՐԱՅՑ ՊԵՏՈՒՆԸ	ԱՇԽԱՏՈՂԻ ԱՐՁԱԿՈՒՐ ԴՆԱՆՈՒ ԱՄԻՍԸ
1.	Արտյոմ Մանուկի Հայրապետյան	Համայնքի ղեկավար	Սեպտեմբեր
2.	Արտակ Դավիթի Ադամյան	Համայնքի ղեկավարի տեղակալ	Օգոստոս
3.	Արտակ Վրոյրի Հայրապետյան	Համայնքի ղեկավարի օգնական	Հուլիս
4.	Հովհաննես Գազիկի Մարգարյան	Աշխատակազմի քարտուղար	Օգոստոս
5.	Նորա Սարգսի Գևորգյան	Առաջատար մասնագետ- հաշվապահ	Սեպտեմբեր
6.	Էլյանորա Պետրիկի Հայրապետյան	Առաջատար մասնագետ- գանձապահ	հոկտեմբեր
7.	Լուսինե Քաջիկի Հակոբյան	Առաջին կարգի մասնագետ	Հոկտեմբեր
8.	Սոֆյա Հայրապետի Աբրահամյան	Առաջին կարգի մասնագետ	Օգոստոս
9.	Սուսաննա Միրանի Սարգսյան	Երկրորդ կարգի մասնագետ	հոկտեմբեր
10.	Գեորգիկ Պապինի Երեմյան	գործավար	Հուլիս
11.	Նվեր Վոլոդյայի Հովսեփյան	Տնտեսավար	նոյեմբեր
12.	Սերուժան Խաբենի Ենթոյան	Գերեզմանատան սպ րանվոր	Հունիս
13.	Հովիկ Համբարումի Խաչատրյան	վարորդ	հուլիս
14.	Ժենիկ Երեմի Սահակյան	Հավաքարար	Մայիս
15.	Լուսինե Վարդանի Վարդանյան	Հավաքարար	Նոյեմբեր
16.	Նաիրա Թիարի Գրիգորյան	Հավաքարար	Սեպտեմբեր
17.	Ստեփան Արմենի Հայրապետյան	Պահակ	նոյեմբեր
18.	Խաչիկ Գուրգենի Գրիգորյան	Աղբահանության բանվոր	Ապրիլ

**ԱՏՈՐ ԱՄՍԺԱՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ**

*(Ստորագրություն)*

(ՍՏՈՐ ԱՄՍԺՈՒՆՅՈՒՆ)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 5-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի  
N 28-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակչության տարիանման հանձնաժողովը ստեղծելու մասին» N 28-Ա որոշման N 3 հավելվածում կատարել փոփոխություն, որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 21 թ. հունվարի 11  
գ.Լեռնանիստ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆ ՍՏԵԾԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**Տարահանման հավաքակայան ընտրել Լեռնանիստի Ս.Նազարյանի անվան միջնակարգ դպրոցի շենքը .**

**Տարահանման հանձնաժողովի անձնակազմը՝**

ՏՀԿ-ում զբաղեցրած պաշտոնը	ԱԱՀ	Քաղաքացիական պաշտոնը
ՏՀԿ պետ	Հայրապետյան Հայկ Վրեժի	Լեռնանիստի միջնակարգ դպրոցի տնօրեն
ՏՀԿ պետի տեղակալ	Հարությունյան Լեյլի Սերյոժայի	Լեռնանիստի միջնակարգ դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն
ՏՀԿ հերթապահ	Հայրապետյան Ռուզաննա Ժորայի	Օպերատոր
Հեռախոսավար	Հարությունյան Լիլիթ Սուրենի	Օպերատոր
<b>Ընդունման, հաշվառման և բաշխման խումբ</b>		
Խմբի պետ	Վիրաբյան Ալեքսան	Զինղեկ
Հաշվառող	Դիլարյան Ռուզաննա Գուրգենի	ուսուցիչ
Հաշվառող	Վարդանյան Լիլիթ Սուրիկի	ուսուցիչ
Հաշվառող	Նիկողոսյան Մուսաննա Մայիսի	ուսուցիչ
Հաշվառող	Ավետիսայն Քրիստինե Ռաֆիկի	ուսուցիչ
Հաշվառող	Հովսեփյան Նելլի Աիշայի	ուսուցիչ
<b>Շարայությունների կազմավորման խումբ</b>		
Խմբի պետ	Երեմյան Մյանհիկ Հայրապետի	ուսուցիչ
Պետի տեղակալ	Մելքոնյան Իսահակ Քաջիկի	ուսուցիչ
Օգնական	Առաքելյան Աննա Գագիկի	ուսուցիչ

Օգնական	Սահակյան Արմինե Սարգսի	ուսուցիչ
Օգնական	Բարաջանյան Ասպրամ Օնիկի	ուսուցիչ
Օգնական	Զալիբեկյան Իրինա Ստյոպայի	ուսուցիչ
<b>Հասարակական կարգի պահպանման խումբ</b>		
Խմբի պետ	Բաղդասարյան Աննա Բորիսի	Լեոնանիստի միջնակարգ դպրոցի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրեն
Օգնական	Հարությունյան Գայանե Վարազդատի	Պաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ
<b>Տեղեկատու սեղան</b>		
Պետ	Բաղդասարյան Էվելինա Բորիսի	ուսուցիչ
Օգնական	Գրիգորյան Հայարփի Ռադիկի	ուսուցիչ
<b>Պարեն</b>		
Պարեն	Հարությունյան Գեղամ Զանիբեկի	պահակ
Օգնական	Բարսեղյան Ալլա Հակոբի	բակապահ
<b>Մոր և մանկան սենյակ</b>		
Պետ (բժիշկ)	Գոհար Տոլիկի Ասատրյան	բժիշկ
Բուժքույր	Բաղդասարյան Էլլադա Լյովայի	բուժքույր
<b>Բժշկական կետ</b>		
Պետ (բժիշկ)	Գոհար Տոլիկի Ասատրյան	բժիշկ
Բուժքույր	Եղիազարյան Արփինե Վարդանի	բուժքույր
Սանիտար	Հարությունյան Արեգնազ Հայկարամի	սանիտար





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 6-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ  
28-Ի N 121-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2017 թվականի նոյեմբերի 28-ի «Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային տարեկան պլանը հաստատելու մասին» N 121-Ա որոշման հավելվածներում կատարել փոփոխություն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



20 21 թ հունվարի 11  
գ. Լեռնանիստ

## ԿԱԶՄ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ  
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ/հ	ԱԱՀ	Պաշտոնը	Պաշտոնը հանձնաժողովում	Նշումներ
1.	Արտակ Ադամյան	Համայնքի ղեկավարի տեղակալ	Հանձնաժողովի նախագահ	
2.	Արտակ Հայրապետյան	Համայնքի ղեկավարի օգնական	Հանձնաժողովի նախագահի տեղեկալ	
3.	Հովհաննես Մարգարյան	Աշխատակազմի քարտուղար	Հանձնաժողովի նախագահի տեղակալ	
4.	Էյանորա Հայրապետյան	Աշխատակազմի առաջատար մասնագետ	Հանձնաժողովի քարտուղար	
5.	Նորա Գևորգյան	Աշխատակազմի առաջատար մասնագետ	Հանձնաժողովի անդամ	
6.	Սոֆյա Աբրահամյան	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	Հանձնաժողովի անդամ	
7.	Լուսիկ Հակոբյան	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	Հանձնաժողովի անդամ	
8.	Հայկ Հայրապետյան	Լեռնանիստի Ս.Նազարյանի անվան միջն դպրոցի տնօրեն	Հանձնաժողովի անդամ	
9.	Գոհար Ասատրյան	Լեռնանիստի ԲԱ ՀՈԱԿ-ի տնօրեն	Հանձնաժողովի անդամ	
10.	Մարինե Ալեքսանյան	Լեռնանիստի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն	Հանձնաժողովի անդամ	
11.	Իսահակ Մելքոնյան	Համայնքի ավագանու անդամ, Լեռնանիստի Ս.Նազարյանի անվան դպրոցի ուսուցիչ	Հանձնաժողովի անդամ	
12.	Գենարի Ավագյան	Համայնքի ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ	
13.	Մելսակ Նազարյան	Համայնքի ավագանու անդամ, Կոտայքի ԳԳՄ, Լեռնանիստ համայնքում հսկիչ	Հանձնաժողովի անդամ	
14.	Գվիղոն Սարգսյան	Հրազդանի էլ. ցանց Լեռնանիստ համայնքի էլ. ցանցերի հսկիչ	Հանձնաժողովի անդամ	



## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հիմնական խնդիրները, գործառույթները և աշխատանքների կազմակերպման կարգը:

2. Հանձնաժողովը ստեղծվում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման /ԳԿԲ/ միջոցառումների կատարման կազմակերպման, պլանավորման և համակարգման նպատակով և հանդիսանում է մշտապես գործող կազմակերպչական, խորհրդակցական և հետազոտական մարմին:

3. Հանձնաժողովը ստեղծվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

4. Հանձնաժողովը կազմավորվում է համայնքի աշխատակազմի, ավագանու անդամների և կազմակերպությունների ներկայացուցիչներից:

5. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

#### II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

##### 6. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համայնքի տարածքում տեղակայված տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների մշակում, կազմակերպում և իրականացում,

2) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ կոմունալ-էներգետիկ և այլ ծառայությունների գործունեության արագ վերականգնմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և իրականացում:

##### 7. Հանձնաժողովի գործառույթներն են՝

###### 1) Խաղաղ ժամանակ՝

ա. տնտեսության օբյեկտների վիճակի վերլուծության անցկացման կազմակերպում՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ դրանց կայուն գործունեության հնարավորության որոշման նպատակով,

բ. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների պլանավորման կազմակերպում,

գ. ռազմական գործողությունների ընթացքում տնտեսության օբյեկտների կորուստների նվազեցմանն ուղղված միջոցառումների նախապատրաստման և իրականացման կազմակերպում,

դ. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների գործունեության վերաբերյալ համայնքի ղեկավարի համար վերլուծական և վիճակագրական նյութերի նախապատրաստման կազմակերպում,

ե. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման նպատակով օբյեկտների տեղաբաշխման կազմակերպում,

զ. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման համար պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, զինվորական կառավարման մարմինների և կազմակերպությունների միջև փոխգործողության կազմակերպում,

է. համայնքի տարածքում տեղակայված կազմակերպությունների ԳԿԲ հանձնաժողովներին մեթոդական և կազմակերպական օգնության ցուցաբերում,

ը. տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանն ուղղությամբ սահմանված կարգով համապատասխան առաջարկությունների ներկայացում համայնքի ղեկավարին,

թ. իր իրավասությունների շրջանակներում այլ հարցերի քննարկում արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման ոլորտում.

## **2) Ռազմական դրության ժամանակ՝**

ա. ռազմական դրության և ռազմական դրության արտակարգ իրավիճակներում տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հավաքի և վերլուծության կազմակերպում,

բ. ռազմական գործողությունների ընթացքում տուժած տնտեսության օբյեկտների վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքի և վերլուծության կազմակերպում,

գ. ռազմական գործողությունների ընթացքում տուժած կոմունալ-էներգետիկ և այլ ծառայությունների գործունեության արագ վերականգնմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և իրականացում,

դ. ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովմանն ուղղությամբ սահմանված կարգով առաջարկությունների ներկայացում համայնքի ղեկավարին,

ե. իր վրա դրված խնդիրների լուծման շրջանակներում այլ գործառույթների իրականացում:

## **8. Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակներում իրավունք ունի՝**

1) սահմանված կարգով հարցում անել և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն,

2) սահմանված կարգով իր աշխատանքներին ներգրավել գիտնականներին, փորձագետներին և մասնագետներին,

3) հանձնաժողովի անդամների թվաքանակից ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր և սահմանված կարգով նրանց աշխատանքներին ներգրավել գիտնականներին, փորձագետներին և մասնագետներին, ինչպես նաև պետական կառավարման մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներին,

4) մասնակցել արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների ԳԿԲ հարցերով նպատակային ծրագրերի և այլ իրավական ակտերի նախապատրաստման աշխատանքներին և պատրաստել առաջարկություններ դրանց իրականացման վերաբերյալ.



5) մասնակցություն ցուցաբերել ՔՊ դատմանավարժությունների և վարժանքների, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների ԳԿԲ հարցերով գիտահետազոտական աշխատանքների անցկացմանը:

### III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հանձնաժողովի գործունեության կազմակերպումը ապահովում է նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալներից մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

10. Հանձնաժողովի կանոնակարգը հաստատվում է հանձնաժողովի նախագահի կողմից՝ սույն կանոնադրության պահանջների համաձայն:

11. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային (հիմնական միջոցառումների) պլանին համապատասխան, որը մշակվում է հանձնաժողովի և հաստատվում համայնքի ղեկավարի կողմից, և եռամսյա պլաններին համապատասխան, որոնք մշակվում են հանձնաժողովի և հաստատվում հանձնաժողովի նախագահի կողմից:

12. Հանձնաժողովի նիստերը անցկացվում են ըստ անհրաժեշտության, բայց կիսամյակը մեկ անգամից ոչ պակաս:

13. Հանձնաժողովի հերթական պլանավորված նիստի օրակարգի, ամսաթվի, ժամանակի, անցկացման վայրի մասին նրա անդամները պետք է տեղեկացված լինեն ոչ ուշ, քան ենթադրյալ անցկացման օրվանից 7 օր առաջ:

14. Հանձնաժողովի նիստն անցկացնում է նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ իր տեղակալներից մեկը:

15. Հանձնաժողովի նիստը համարվում է լիիրավ, եթե ներկա է անդամների կեսից ավելին:

16. Հանձնաժողովի անդամները անձամբ մասնակցում են նիստերին, առանց փոխարինման իրավունքի: Հանձնաժողովի անդամներից որևէ մեկի բացակայության դեպքում նիստին քննարկող հարցերի վերաբերյալ նա իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել գրավոր ձևով:

17. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել պետական կառավարման տարածքային մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտնականներ, փորձագետներ և մասնագետներ:

18. Հանձնաժողովի որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ՝ հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում վճռական է հանձնաժողովի նիստը նախագահողի ձայնը:

19. Հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են արձանագրություններով, որոնք ստորագրվում են հանձնաժողովի նիստը նախագահողի և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

#### 20. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեության կազմակերպումը և ապահովում պլանավորումը,

2) բաշխում է պարտականությունները հանձնաժողովի նախագահի տեղակալների և հանձնաժողովի քարտուղարի միջև,

3) հաստատում է հանձնաժողովի նիստի օրակարգը,

4) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի նիստի օրակարգում հարցեր ներառելու վերաբերյալ,

5) ծանոթանում է հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի նյութերին,

6) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

- 7) նախագահում է հանձնաժողովի նիստերին,
- 8) նշանակում է ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի ղեկավարներին, որոշում նրանց կազմը և խնդիրները,
- 9) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի շուրջ,
- 10) ստորագրում է հանձնաժողովի փաստաթղթերը, այդ թվում նիստերի արձանագրությունները,

11) կատարում հանձնաժողովի որոշումները:

#### **21. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝**

- 1) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի նիստի օրակարգում հարցեր ներառելու վերաբերյալ,
- 2) ծանոթանում է հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի նյութերին,
- 3) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,
- 4) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի շուրջ,
- 5) կատարում հանձնաժողովի որոշումները,
- 6) կատարում է հանձնաժողովի և հանձնաժողովի նախագահի հանձնարարականները,
- 7) կատարում է հանձնաժողովի նախագահի պարտականությունները, այդ թվում նախագահում է հանձնաժողովի նիստերին (հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում) նրա հանձնարարությամբ,
- 8) ղեկավարում է հանձնաժողովի կողմից ստեղծվող ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի գործունեությունը,
- 9) մասնակցում է հանձնաժողովի նիստերին հարցերի նախապատրաստմանը և քննարկմանը:

#### **22. Հանձնաժողովի քարտուղարը՝**

- 1) մասնակցում է հարցերի նախապատրաստմանն ու քննարկմանը և հանձնաժողովի նիստի օրակարգի կազմմանը,
- 2) ծանոթանում է հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի նյութերին,
- 3) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,
- 4) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի շուրջ,
- 5) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,
- 6) կատարում հանձնաժողովի որոշումները,
- 7) կատարում հանձնաժողովի և նրա նախագահի հանձնարարականները,
- 8) իրականացնում է հանձնաժողովի գործունեության կազմակերպական և տեղեկատվական վերլուծական ապահովումը,
- 9) ապահովում է հանձնաժողովի գործավարությունը,
- 10) կազմակերպում է հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը,
- 11) տեղեկացնում է հանձնաժողովի նախագահի տեղակալին, հանձնաժողովի անդամներին և նիստերին հրավիրված անձանց հանձնաժողովի նիստի ամսաթվի, ժամանակի, անցկացման վայրի և օրակարգի մասին, ուղարկում է փաստաթղթեր, դրանց նախագծերը և այլ նյութեր, որոնք հանձնաժողովի նիստի ժամանակ ենթակա են քննարկման:

#### **23. Հանձնաժողովի անդամները՝**

- 1) իրավունք ունեն ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի նիստի օրակարգում հարցեր ներառելու վերաբերյալ,
- 2) ծանոթանում են հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի նյութերին,
- 3) մասնակցում են հանձնաժողովի նիստերին,



4) իրավունք ունեն ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի շուրջ,

5) կատարում են հանձնաժողովի որոշումները,

6) կատարում են հանձնաժողովի և նրա նախագահի հանձնարարականները,

7) մասնակցում են հանձնաժողովի կողմից ստեղծվող ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի գործունեությանը,

8) մասնակցում են հանձնաժողովի նիստերին հարցերի նախապատրաստմանը և քննարկմանը:

24. Հանձնաժողովի որոշումները հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվում են հանձնաժողովի նախագահի տեղակալներին, հանձնաժողովի անդամներին և այլ շահագրգիռ անձանց հանձնաժողովի նիստի անցկացումից հետո մեկ շաբաթվա ժամկետում:

25. Հանձնաժողովի գործունեության կազմակերպատեխնիկական ապահովումը կատարվում է օրենքով սահմանված կարգով՝ համայնքի վարչակազմի կողմից՝ տեղական բյուջեի միջոցների հաշվին:



Հավելված N 3  
 Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի  
 2017 թվականի նոյեմբերի 28-ի N 121-Ա որոշման  
 Փոփո. 2021 թվականի հունվարի 11-ի N 6-Ա որոշման

**ՊԼԱՆ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ**

Հ/հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Կատարմ. ժամկետը	Նշումներ
1	2	3	4	5
1.	Մերթոդական օգնության ցուցաբերում համայնքի տարածքում տեղակայված կազմակերպություններին	համայնքի ԳԿԲ հանձնաժողով	1-ին կիսամյակ	
2.	Համայնքի բնակիչների իրազեկում՝ օդային տազնապի ազդանշանի դեպքում պատասպարվելու կանոնները: Համայնքի պաշտպանական կառույցներում բնակչության պատասպարման և ամրագրման հաշվարկների վերահսկում	համայնքի ԳԿԲ հանձնաժողով	Տարվա ընթացքում	
3.	Պաշտպանական կառույցների վիճակի պահպանության և պատրաստականության վերահսկում	համայնքի ԳԿԲ հանձնաժողով	2-րդ կիսամյակ	
4.	Մասնավոր տներում առկա նկուղների վերաբերյալ տեղեկությունների մշակում և բնակչության թվաքանակի տեղաբաշխում	համայնքի ԳԿԲ հանձնաժողով	Տարվա ընթացքում	
5.	Համայնքի բնակչության հետ հանդիպում «Տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՊ ղեկավար կազմի հետ խորհրդատվություն, խաղաղից ռազմական դրության փոխադրելու ժամանակ» և այլ թեմաներով	համայնքի ԳԿԲ հանձնաժողով	տարվա ընթացքում	
6.	1. Համայնքի ԳԿԲ հանձնաժողովի աշխատանքի արդյունքների ամփոփում և խնդրադրում հաջորդ տարվա համար	Համայնքի ԳԿԲ հանձնաժողով	2-րդ կիսամյակ	

ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ԳԿԲ

հանձնաժողովի նախագահ՝



Արտակ Աղամյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 7-Ա

**ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՀԱՆ ԶԱՆԻՔԵԿԻ ԽԱՀԱՏՈՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ  
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ  
ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Վահան Զանիքեկի Խաչատրյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, «Ինքնական կառուցված շենքերի, շինությունների և ինքնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վահան Զանիքեկի Խաչատրյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչսպես նաև հնագիտական, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմաներին, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ճանաչել Վահան Զանիքեկի Խաչատրյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0109-0013 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,095361 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից չափազորված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Քաղաքացի՝ Վահան Զանիքեկի Խաչատրյանին պատկանող կադաստրային 07-033-0109-0013 ծածկագրով 0,095361 հա մակերեսով անշարժ հողամասին

տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց 2-րդ նրբանցք 1-ին փակուղի թիվ 16:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Վահան Զանիբեկի Խաչատրյանի սեփականության իրավունքը ամրագրված հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ԱՐՏՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2021 թ. հունվարի 14  
գ. Լեռնանիստ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 8-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով կառուցապատողի հայտը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Քաղաքացի Յուրի Ամասիայի Աֆրիկյանին սեփականության իրավունքով պատկանող Լեռնանիստ համայնքի 2-րդ փողոց թիվ 9/1 հասցեում գտնվող /07-033-0086-0017 կադաստրային ծածկագրի/ 0,0869 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հասարակական կառուցապատում իրականացնելու համար /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26082020-07-0180, տրված 2020 թվականի օգոստոսի 26-ին:/
2. Քաղաքացի Յուրի Ամասիայի Աֆրիկյանին սեփականության իրավունքով պատկանող Լեռնանիստ համայնքի 2-րդ փողոց թիվ 9/1 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում /կադաստրային ծածկագիր 07-033-0086-0017/ տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ 1 /մեկ/ երկհարկանի հյուրատան /նկուղով/ կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
3. Սույն որոշման երկրորդ կետն ուժի մեջ է մտնում որոշման առաջին կետում նշված հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԱՎ**







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 9-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԱԶՄԻԿ ԶԱՆԻՔԵԿԻ ՍԻՐՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռազմիկ Զանիքեկի Սիրունյանի դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետություն կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, <<ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կադաստրային քարտեզագրման արդյունքում Ռազմիկ Զանիքեկի Սիրունյանի կողմից փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ճանուցել Ռազմիկ Զանիքեկի Սիրունյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0125-0005 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,257476 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասերի սահմանները որոշվում են <<ԳԵՈԼԵՆԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

